

Հաստատված է

ՄԽՀ-ի խորհրդի _____

_____ N ____ նիստում

ՄԽՀ խորհրդի նախագահ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն աշխատակարգը սահմանում է Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նախագահի, քարտուղարի և անդամների իրավասությունները, նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, նիստերի արձանագրման, որոշումների ընդունման կարգը:

1.2. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի աշխատակարգը Մովսես Խորենացու անվան համալսարանի կանոնադրության 20-րդ կետի 1-ին ենթակետի հիման վրա հաստատում է Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհուրդը:

1.3. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի աշխատանքների հետ կապված ծախսերը կատարվում են Մովսես Խորենացու անվան համալսարանի միջոցների հաշվին:

2. Մովսես Խորենացու անվան համալսարան խորհրդի կառուցվածքը և իրավասությունները

2.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհուրդը կոլեգիալ կառավարման մարմին է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով, համալսարանի կանոնադրությանը համաձայն:

2.2. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհուրդն ունի նախագահ և քարտուղար:

Ըստ անհրաժեշտության՝ խորհուրդը ձևավորում է ժամանակավոր հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր, որոնք ուսումնասիրում են առաջադրված հարցերը, պատրաստում նախագծեր և դրանք ներկայացնում խորհրդին:

2.3. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհուրդը ձևավորելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող կամ սովորող:

2.4. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհուրդը՝

1. քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն,

2. հաստատում է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրերը,

3. լսում և գնահատում է համալսարանի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը,

4. ընտրում է համալսարանի ռեկտորին,

5. քննարկում և սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում Մովսես Խորենացու անվան համալսարանի կանոնադրությունը կամ դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին առաջարկությունները,

6. հաստատում է իր աշխատակարգը, ռեկտորի ընտրության ընթացակարգը:

2.5. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նախագահը՝

1. նախապատրաստում և ղեկավարում է խորհրդի նիստերը

2. ստորագրում է խորհրդի արձանագրությունները և որոշումները,

3. իրականացնում է սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

2.6. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի քարտուղարը՝

1. ծանուցում է խորհրդի անդամներին նիստի օրվա, տեղի և օրակարգի մասին,

2. գրանցում է նիստին մասնակցող խորհրդի անդամներին,

3. կազմում և ստորագրում է խորհրդի նիստերի արձանագրությունը,

4. կատարում է սույն աշխատակարգով նախատեսված այլ

լիազորություններ:

3. Մովսես Խորենացու անվան համալսարանի նիստերի գումարումը

3.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Նիստերի նախապատրաստումը իրականացնում են խորհրդի նախագահը և քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում այդ աշխատանքներին ներգրավելով խորհրդի մյուս անդամներին:

3.2. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նիստը իրավագոր է խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը մասնակցության դեպքում:

3.3. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի առաջին նիստը մինչև նախագահի ընտրությունը, նախագահում է տարիքով ավագ անդամը, քարտուղարում խորհրդի կրտսեր անդամը:

3.4. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի իրավասությունն իրականացվում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:

3.5. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի հերթական նիստերը գումարվում են առնվազն տարին մեկ անգամ նրա նախագահի կողմից:

3.6. Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտորի ընտրության նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում են ռեկտորի ընտրության ընթացակարգով:

3.7. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության նրա նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև հիմնադրի, համալսարանի ռեկտորի, Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի կամ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով:

3.8. Հիմնադրի, համալսարանի ռեկտորի, Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանված ժամկետում և օրակարգով:

3.9. Խորհրդի անդամներին նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին խորհրդի քարտուղարը տեղեկացնում է ամենաուշը 5 օր առաջ, գրավոր ծանուցմամբ:

4. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի արտահերթ նիստերի գումարման կարգ

4.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի արտահերթ նիստ գումարելու խորհրդի նախագահին ներկայացված գրավոր պահանջը պետք է պարունակի խորհրդի օրակարգում առաջարկվող հարցերը՝ արտահերթ նիստը պահանջող խորհրդի անդամների կամ Մովսես Խորենացու անվան համալսարանի գիտական խորհրդի անդամների ստորագրություններով:

4.2. Հիմնադրի, Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտորի, Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի գրավոր պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նախագահը պետք է ընդունի Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նիստ գումարելու մասին որոշում:

5. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նիստերի քվեակազմը

5.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է խորհրդի քարտուղարը՝ նիստը սկսելուց առաջ: Քվեակազմը չապահովելու դեպքում նախագահի որոշմամբ կարող է երկարաձգվել գրանցումը մինչև քվեակազմի ապահովումը, կամ հետաձգվել նիստը:

Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի քվեակազմի բացակայության պատճառով հետաձգված նիստը նույն օրակարգով գումարվում է ընդհանուր կարգով:

6. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նիստերի անցկացման ընթացակարգ

6.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նախագահը, բացելով Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի նիստը, հայտարարում է քվեակազմի առկայությունը և քվեարկության է դնում օրակարգը:

6.2. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

6.3. Օրակարգի հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ելույթների տևողությունը որոշում է խորհուրդը:

7. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդում քվեարկության կարգը

7.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե Մովսես Խորենացու անվան համալսարանի կանոնադրությամբ, սույն աշխատակարգով կամ խորհրդի որոշմամբ քվեարկության այլ կարգ չի սահմանվել:

7.2. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհուրդը կարող է ընդունել որոշում փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու մասին:

7.3. Փակ, գաղտնի քվեարկության քվեաթերթիկները պատրաստվում են Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի քարտուղարի կողմից:

8. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի հանձնաժողովները

8.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի հանձնաժողովների կառուցվածքը և կազմը որոշում է խորհուրդը:

8.2. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովի արձանագրության մեջ մտցնել հատուկ

կարծիք և այդ մասին տեղյակ պահել Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդին:

9. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի արձանագրությունը

9.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի արձանագրությունը երկու օրինակով կազմում է Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի քարտուղարը խորհրդի նիստը ավարտելուց հետո՝ երեք օրվա ընթացքում: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

9.2. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ժամանակը, քվեակազմը, նախագահը, քարտուղարը, օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները:

10. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի որոշումները

10.1. Մովսես Խորենացու անվան համալսարանի խորհրդի որոշումները կենսագործվում են Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտորի հրամաններով: